Կարեն Խաչատրյան

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԽՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1920-1922 ԹԹ.)

Բանալի բառեր – ՀՍԽՀ, ՌՍԴԽՀ, արտգործժողկոմատ, արտաքին քաղաքականություն, համաձայնագիր, քաղաքական ազդեցություն, ինքնիշխանության սահմանափակում:

1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի հայ–ռուսական համաձայնագրով Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Հայաստանը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հիմնահարցերում թեև առաջնորդվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով և հրահանգներով, այդուհանդերձ մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ–ի կազմավորումը (1922 թ.) ուներ որոշակի ինքնիշխան կարգավիճակ և օժտված էր պետականության խորհրդանիշներով (Սահմանադրություն, զինանշան, դրոշ, օրհներգ, պետական կառավարման համակարգ, այդ թվում՝ արտաքին կապերի գերատեսչություն և այլն): ՀՍԽՀ արտաքին քաղաքական գործունեությունը սկզբնական շրջանում իրականացնում էր Ռազմհեղկոմը, ապա՝Արտաքին գործերի ժողկոմատը, որը 1920-1922 թթ. ղեկավարել են Ալեքսանդր Բեկզադյանը և Ասքանազ Մռավյանը: Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո Հայհեղկոմի որոշումով լիազորություններից զրկվեցին Առաջին հանրապետության արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները: Դրանք կազմավորվեցին նոր հիմունքներով: Խորհրդային Հայաստանը միջպետական հարաբերություններ ու առևտրատնտեսական կապեր հաստատեց ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի քանի երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: ՀՍԽՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ գործում էին Խորհրդային Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեջանում և այլն: Ոչ խորհրդային երկրներից Հայաստանը դիվանագիտական առնչություններ ուներ և առևտրական կապեր էր հաստատել Իրանի և Թուրքիայի հետ: Վերջինիս հետ հարաբերությունները թեև անչափ լարված էին, սակայն Կ.Պոլսում գործում էր ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցիչը, իսկ Կարսում հաստատվել էր դիվանագիտական ներկայացուցչություն: Իրանի հետ ՀՍԽՀ հարաբերությունները կրում էին բարիդրացիական բնույթ, առևտրատնտեսական սերտ կապեր էին հաստատվել սահմանակից Մակուի խանության հետ, կնքվել էր համապատասխան համաձայնագիր: Երևանում իր գործունեությունն էր շարունակում իրանական հյուպատոսությունը: Խորհրդային Հայաստանում գործում էին իտալական «Սագո» և շվեդական «Բալթիկ» առևտրական ընկերությունները, ամերիկյան և անգլիական նպաստամատույց կոմիտեները:

Այդուհանդերձ, Խորհրդային Հայաստանի արտաքին քաղաքական գործունեությունը անչափ սահմանափակ էր և ենթակա Խորհրդային Ռուսաստանին: Ինչպես

հայտարարում էր Հայհեղկոմի անդամ Ա. Բեկզադյանը, «Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, երկրի իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, քաղաքականության մեջ պետք է հետևեն Խորհրդային Ռուսաստանին»[1]: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը Ռուսաստանի կոմկուսի բաղկացուցիչ մասերից մեկն էր և ղեկավարվում էր քաղաքական նույն կենտրոնից՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմից՝ նրա Կովկասյան բյուրոյի միջոցով: Ուստի պատահական չէ, որ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն աստիճանաբար ուժեղացնում են քաղաքական ազդեցությունը նրա նկատմամբ: Եվ եթե ներքին քաղաքականության հարցերում խորհրդային ազգային հանրապետությունների, այդ թվում Հայաստանի որոշ ինքնուրույնությունը պահպանվում էր, ապա արտաքին քաղաքականության հարցերում այն հետևողականորեն վերացվում էր: Խորհրդային հանրապետությունների արտաքին քաղաքական գործունեությունը աչալուրջ հսկվում էր Խորհրդային Ռուսաստանի արտաքին, ինչպես նաև ազգությունների գործերի ժողկոմատների կողմից: ՌՍԴԽՀ Ժողկոմխորհի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով ազգային խորհրդային հանրապետությունների կառավարություններին առընթեր ստեղծվեցին ՌՍԴԽՀ ազգությունների գործերի ժողկոմատի ներկայացուցչություններ, որոնք քաղաքական մեծ ազդեցություն ունեին հանրապետությունների ղեկավարության վրա: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը խորհրդային հանրապետությունների արտգործժողկոմատներից պահանջում էր Մոսկվա ուղարկել բոլոր որոշումների և հրահանգների պատճենները: Այսպես, անդրկովկասյան հանրապետություններում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը 1921 թ. հունիսի սկզբին հանրապետություններից պահանջեց իրեն ուղարկել արտաքին հարաբերություններին առնչվող ժողկոմխորհների և արտգործժողկոմատների պատրաստած փաստաթղթերի պատճենները: Լեգրանը դա պատճառաբանում էր հանրապետությունների և ՌՍԴԽՀ ներկայացուցչության միջև գործնական հարաբերություններ ունենալու անհրաժեշտությամբ: Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի պահանջն ի կատար ածվեց (հունիսի 6-ին Թիֆլիս ուղարկած հեռագրով Ա. Մռավյանը տեղեկացրեց այդ մասին)[2]:

Արդեն 1921 թ. աշնան սկզբից, երբ Խորհրդային Ռուսաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին դրությունը որոշակիորեն կայունացավ, նա սկսեց ավելի ուժեղացնել քաղաքական ազդեցությունը խորհրդային հանրապետությունների վրա: Դա նկատվեց նաև 1921 թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13-ը Կարսում ընթացող անդրկովկասաթուրքական կոնֆերանսում, որտեղ Խորհրդային Ռուսաստանը ներկայանում էր որպես միջնորդ Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների և քեմալական Թուրքիայի միջև: Կարսում հայկական կողմին փաստորեն պարտադրվեց վավերացնել Մոսկվայի մարտի 16-ի ռուս-թուրքական «դավադիր գործարքը»: Կարսի պայմանագիրը կարևորելով հարևանների հետ հաշտ ապրելու և տարածաշրջանային խաղաղությունը պահպանելու անհրաժեշտությամբ, ՀՍԽՀ–ի կողմից այն ստորագրած արտգործժողկոմ Ա. Մռավյանը նշում է. «Մենք չենք կարող երբևիցե հրա-

[1] Բեկզադյան Ա., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Ե., 1981, էջ 83-84:

[2] Տե՛ս Սուքիասյան Հ., Խորհրդային Հայաստանի դիվանագիտական կապերը 1920-1922 թթ., Ե., 2014, էջ 15-16:

ժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»[1]:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 16-ի որոշումով լուծարվում էին խորհրդային հանրապետություններում ՀՍԽՀ արտգործժողկոմատի լիազոր ներկայացուցչությունները և հյուպատոսությունները, բացառություն արվեց միայն ՌՍԴԽՀ կառավարությանը կից Մոսկվայում հայկական լիազոր ներկայացուցչության համար[2]: Այն պահպանելու անհրաժեշտության մասին վճռականորեն հանդես եկավ ներկայացուցչության ղեկավար Սահակ Տեր-Գաբրիելյանը: ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանին հասցեագրած նամակում Տեր-Գաբրիելյանը հայտնում է, որ ներկայացուցչության լուծարումը միջազգային հանրության կողմից կդիտվի որպես «Հայաստանի քաղաքական ինքնուրույնության նվազման փաստ»[3]:

Ձգտելով էլ ավելի ամրապնդել խորհրդային հանրապետությունների նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը, նաև հասնել խորհրդային բոլոր հանրապետությունների արտաքին քաղաքականության միօրինակությանը՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. դեկտեմբերի 8-ին քննարկում է ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի առաջարկությունները խորհրդային հանրապետությունների կողմից միջազգային պայմանագրեր ստորագրելու կարգի և արտասահմանում Խորհրդային Ռուսաստանի ու խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների փոխհարաբերությունների մասին: Քաղբյուրոյի ընդունած համապատասխան որոշումներում արձանագրվեց. 1. Ընդունել որպես անխախտելի սկզբունք այն, որ Ռուսաստանի հետ դաշնակից միութենական խորհրդային հանրապետություններն իրավունք չունեն «առանց ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի հետ նախապես համաձայնեցնելու» ստորագրել միջազգային որևէ պայմանագիր: 2. Ընդունել, որ միութենական խորհրդային հանրապետությունների արտասահմանյան բոլոր ներկայացուցիչները ենթարկվում են ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչներին: Հնարավոր տարակարծությունների և տարաձայնությունների դեպքում՝ պարտադիր իրականացնել ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի որոշումը, իսկ խնդիրը փոխանցել Մոսկվա՝ շահագրգիռ հանրապետությունների կենտրոնական գերատեսչությունների հետ համաձայնեցնելու նպատակով[4]:

Անդրկովկասում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը քաղբյուրոյի դեկտեմբերի 8-ի որոշումների մասին անմիջապես տեղեկացրեց անդրկովկասյան երեք հանրապետությունների ղեկավարներին, ինչպես նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին: 1921 թ. դեկտեմբերի 11-ին Թիֆլիսից ուղարկած հեռագրերում Լեգրանը նաև խնդրում է, որ Անդրկովկասի հանրապետությունների ղեկավարությունը անհապաղ քաղբյուրոյի որոշումներից բխող համապատասխան հրահանգներ իջեցնի արտասահմանում հանրապետությունների ներկայացուցիչներին և այդ մասին տեղեկացնի անձամբ իրեն[5]:

---

[1] «Խորհրդային Հայաստան», հոկտեմբերի 21, 1921, թիվ 201:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 23:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 88:
[4] Նույն տեղում, գ. 98, թ. 23– 24:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 59:

Խորհրդային Ռուսաստանի պետական և կուսակցական վերադաս մարմինները աչալրջորեն հետևում էին, որ խորհրդային հանրապետությունները չփորձեն խախտել արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի դեկտեմբերի 8-ի որոշումները և հրահանգները, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմում էին վճռական «պատժիչ» միջոցների: Նման քաղաքականությունը բնորոշող փաստերը քիչ չեն. անդրադառնանք դրանցից մի քանիսին, որոնք առնչվում են Խորհրդային Հայաստանին:

Ռուսաստանում 1921-1922 թթ. տարածված սովի դեմ պայքարելու գործում խորհրդային կառավարությունը ստիպված էր մի կողմ դնել գաղափարական որոշ սկզբունքներ և ընդունել բարեգործական միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից տրամադրվող օգնությունը: Նորվեգիացի հայտնի բևեռախույզ և գիտնական, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անվան հետ էր կապված այդ տարիներին Միջազգային Կարմիր խաչի գործունեությունը Ռուսաստանում[1]: 1921 թ. օգոստոսի 27-ին և դեկտեմբերի 10-ին ՌՍԴԽՀ կառավարության և Ֆ. Նանսենի միջև Մոսկվայում համաձայնագրեր ստորագրվեցին Նանսենի գլխավորած կազմակերպության կողմից Ռուսաստանում օգնության գործը կազմակերպելու և արտասահմանից ծանրոցներ ու անձնական փաթեթներ Ռուսաստան առաքելու մասին[2]:

Նանսենյան կազմակերպության առաջարկությամբ և ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի համաձայնությամբ 1922 թ. մարտի 1-ին Մոսկվայում նրանց միջև ստորագրվում է համաձայնագիր, ըստ որի՝ բնակչությանը օգնություն հատկացնելու գործը նաև Հայաստանում կազմակերպելու և իրականացնելու համար Նանսենի և Ռուսաստանի կառավարության միջև ստորագրված համաձայնագրերի դրույթները տարածվելու էին նաև Հայաստանի վրա: Համաձայնագրով հատուկ սահմանվում է, որ Հայաստանում գործունեության ընթացքում Նանսենյան կազմակերպությունը պետք է անշեղորեն ղեկավարվի այն բոլոր նորմերով, որոնք դրված են Ռուսաստանի հետ ստորագրված համաձայնագրերի հիմքում[3]: Դրանով կողմերը փորձում էին լիովին ապահովագրվել Մոսկվայի հնարավոր դժգոհություններից: Սակայն ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչի կողմից համաձայնագրի ստորագրման փաստն իսկ արժանանում է Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների բացասական վերաբերմունքին և խիստ դժգոհությանը:

1922 թ. մարտի սկզբին ՌԿ(բ)Կ Կենտկոմը ստանում է ՌՍԴԽՀ արտգործ-ժողկոմատի ահազանգն այն մասին, որ Տեր-Գաբրիելյանն առանց թույլտվության և խախտելով Կենտկոմի քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի որոշումները՝ ինքնակամ միջազգային պայմանագիր է կնքել Նանսենյան կազմակերպության հետ[4]: Կենտկոմի քարտուղարությունը անմիջապես արձագանքում է, և Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովի կարգադրությամբ համապատասխան բացատրություններ պահանջում Ս. Տեր-Գաբրիելյանից[5]:

---

[1] 1921 թ. օգոստոսի կեսերին Ժնևում տեղի ունեցած Կարմիր խաչի միջազգային կոնֆերանսը Ռուսաստանի սովյալներին օգնություն ցույց տալու Գլխավոր լիազոր ընտրեց Ֆ. Նանսենին:

[2] Տե՛ս Документы внешней политики СССР (ДВП СССР), М., 1960, т. IV, էջ 294-298:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 10, թ. 86:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 26-27:

[5] Նույն տեղում, թ. 25:

Ռուսաստանի արտգործժողկոմի տեղակալ Մ. Լիտվինովը մարտի 15-ին հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկում Թիֆլիս՝ անդրկովկասյան հանրապետություններում ՌՍԴԽՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին. «Տեր-Գաբրիելյանն առանց մեր գիտության համաձայնագիր է կնքել Նանսենի կազմակերպության հետ: Դա հնարավորություն կտա Հայաստանը ողողել անցանկալի օտարերկրյա գործակալներով … Պնդեք, որպեսզի հայկական կառավարությունը չհաստատի Տեր-Գաբրիելյանի (ստորագրած – Խ. Կ.) համաձայնագիրը և հրահանգավորի նրան, որպեսզի առանց մեզ հետ համաձայնեցնելու այսուհետև ոչ մի տեսակի համաձայնագրեր չստորագրի»[1]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմ և ՌՍԴԽՀ արտգործժողկոմատ ուղարկած դիմումում Ս. Տեր-Գաբրիելյանը հերքում է իրեն ներկայացրած մեղադրանքները և նշում, որ թյուրիմացություն է տեղի է ունեցել: Դիմումի բովանդակությունից պարզ է դառնում, որ համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ Նանսենյան կազմակերպության առաջարկության մասին Տեր-Գաբրիելյանը դեռևս 1922 թ. փետրվարի 25-ին տեղյակ է պահել Ռուսաստանի արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակիցներին: Նա նաև խնդրել է (եթե համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ առարկություններ չլինեն) մեքենագրել նրա տեքստը՝ հետագայում ստորագրելու համար: Ժողկոմատի աշխատակիցները Տեր-Գաբրիելյանին ասել են, որ հարցի մասին տեղյակ կպահեն ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին և մի քանի օրից կտեղեկացնեն նրա վերաբերմունքի մասին: Երկու օր անց ժողկոմատի գրասենյակից Տեր-Գաբրիելյանը ստանում է համաձայնագրի մեքենագրած տեքստը և «համոզված լինելով», որ այն արժանացել է արտգործժողկոմատի հավանությանը (այլապես չէր մեքենագրվի)՝ մարտի 1-ին ստորագրում է: Դիմումի վերջում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչը պատրաստակամություն է հայտնում («Եթե համաձայնագիրը քաղաքականապես անընդունելի է») հայցել Նանսենյան կազմակերպության ներողամտությունը և խնդրել չեղյալ հայտարարել այն[2]: Ստանալով ՌՍԴԽՀ իշխանությունների համապատասխան հրահանգները՝ Տեր-Գաբրիելյանն այդպես էլ վարվում է. Նանսենյան կազմակերպություն ուղղված դիմումում նա հայտնում է, որ իր կողմից ստորագրված համաձայնագիրը «չի արժանացել կառավարության (ՀՍԽՀ – Խ. Կ.) հաստատմանը», ուստի այն պետք է չեղյալ հայտարարվի[3]: Սակայն, ինչպես տեղեկանում ենք ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանին ուղղված Ս. Տեր-Գաբրիելյանի 1922 թ. մարտի 21-ի թիվ 496 հեռագրի բովանդակությունից, համաձայնագիրը չեղյալ հայտարարելու հրահանգ Հայաստանի կառավարությունը նրան չէր տվել: Տեր-Գաբրիելյանը տեղեկացնում է Մռավյանին, որ Նանսենյան կազմակերպություն ուղղված դիմումում ինքը խնդրել է չեղյալ համարել մարտի 1-ի համաձայնագիրը՝ «վկայակոչելով Հայաստանի կառավարությունից իբր թե ստացած մարտի 12-ի թիվ 448 հեռագիր-հրահանգը»: Այսքանից հետո Տեր-Գաբրիելյանը խնդրում է Մռավյանին (Նանսենյան կազմակերպության կողմից հնարավոր հարցապնդման դեպքում) «հաստատել վերը նշված հրահանգի իրողությունը»[4]:

---

[1] Նույն տեղում, թ. 30:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 28:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 29:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 32:

1922 թ. մարտի 22-ին Ա. Մռավյանին ուղարկելով «չարաբաստիկ համաձայնագրի» վերաբերյալ ամբողջ գրագրությունը՝ Տեր-Գաբրիելյանը նշում է. «Փաստաթղթերին ծանոթանալուց հետո միայն դու կտեսնես, որ սեպարատ (առանձին – Խ. Կ.) պայմանագիր կնքելու մտադրություն ես չեմ ունեցել: Բայց չէ՞ որ դու գիտես, թե որքան հիվանդագին է վերաբերվում ընկ. Չիչերինը ամեն տեսակ այլախոհությանը»[1]:

Այո՛, Տեր-Գաբրիելյանն իրավացի էր, Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները, կուսակցական վերադաս կենտրոնական մարմինները չէին հանդուրժում խորհրդային ազգային հանրապետությունների կողմից արտաքին քաղաքական ասպարեզում դրսևորված որևէ ինքնուրույնություն և ամենայն վճռականությամբ ճնշում էին դրանք:

Նման քաղաքականության ևս մեկ օրինակ է հետևյալ փաստը: Հայտնի է, որ Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ), որը ձևավորվել էր դեռևս 1918 թ. և գործունեություն ծավալել նաև Հայաստանի Հանրապետությունում, 1921-1922 թթ. շարունակում էր օգնություն հատկացնել նաև Խորհրդային Հայաստանի սովյալ բնակչությանը: Խորհրդային Հայաստանում Ամերկոմի գործունեությունը կարգավորելու նպատակով ամերիկյան կողմի նախաձեռնությամբ ՀՍԽՀ կառավարության և Ամերկոմի ներկայացուցչի միջև 1922 թ. օգոստոսի 7-ին Երևանում ստորագրվում է համապատասխան համաձայնագիր[2]: 24 կետից բաղկացած ծավալուն այդ փաստաթղթում նշված էին կողմերի համագործակցությունը կարգավորող բոլոր դրույթները (համաձայնագրի ռուսերեն բնագիրը ուղարկվել էր ՌՍԴԽՀ արտգործժողկոմատ)[3]:

Այսպիսով, ինչպես և վերը նշված դեպքում, Հայաստանի իշխանությունները կարծես թե ապահովել էին իրենց կենտրոնական իշխանությունների հնարավոր դժգոհություններից: Սակայն պարզվում է, որ՝ ոչ: Համաձայնագիրը և այն ստորագրելու փաստն իսկ մեծ դժգոհություն է առաջացնում Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական կուսակցական մարմիններում: Հարցը հատուկ քննարկման առարկա է դառնում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Անդրերկրկոմի նախագահության 1922 թ. օգոստոսի 24-ի նիստում: Այստեղ որոշվում է համաձայնագիրը համարել անվավեր, իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմին մատնանշել, որ առանց Անդրերկրկոմի թույլտվության արտասահմանցիների հետ պայմանագրեր ստորագրել չի կարելի: Որոշման հաջորդ կետով անհրաժեշտ է համարվում Միութենական հանրապետությունների և Ամերկոմի միջև պայմանագրերի ստորագրումը միայն Անդրդաշնության Միությունների խորհրդի միջոցով և նրա կողմից մշակված պայմանագրի հիման վրա[4]: Նշենք, որ այդ ժամանակ Անդրերկրկոմի քարտուղարն էր Ալեքսանդր Մյասնիկյանը:

Հիմք ընդունելով Անդրերկրկոմի 1922 թ. օգոստոսի 24-ի որոշումը՝ օգոստոսի 30-ին Անդրդաշնության Միությունների խորհուրդը չեղյալ է համարում Հայաստանի իշխանությունների կողմից ստորագրված համաձայնագիրը[5]: Փոխարենը 1922 թ.

---

[1] Նույն տեղում, թ. 23:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 113:
[3] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 30, գ. 14, թ. 8-14:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 42:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 27, թ. 16:

նոյեմբերի 1-ին համաձայնագիր է ստորագրվում Ամերկոմի և ՌՍԴԽՀ կառավարության միջև[1]: Հետաքրքիր է, որ այն հիմնականում կրկնում էր Հայաստանի և Ամերկոմի միջև ստորագրված, իսկ այնուհետև «չեղյալ համարված» համաձայնագիրը: Համաձայնագիրը կիրառելի էր համարվում նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների, այդ թվում Հայաստանի համար:

Այսպիսով, ՌՍԴԽՀ պետական և կուսակցական մարմիններն առիթը բաց չէին թողնում միջամտելու խորհրդային հանրապետությունների ինքնիշխանությանը՝ հասկացնել տալով, որ այն սահմանափակ է: Անգլիացի պատմաբան Վ. Սվոբոդան իր «Ազատ հանրապետությունների կամավո՞ր միություն (ԽՍՀՄ կազմավորման պատմությունից)» ուշագրավ հոդվածում Ռուսաստանի կողմից խորհրդային հանրապետությունների ներքին գործերին միջամտելու բազմաթիվ ցայտուն օրինակներ է բերում[2]: Իրավացի է ռուս հետազոտող Լ. Նեժինսկին, երբ նշում է, որ խորհրդային մի շարք հանրապետությունների ձգտումը՝ դառնալ միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ, «ստիպում էր բոլշևիկյան կենտրոնական ղեկավարությանը 1921-1922 թթ. արագացնել բոլոր առումներով խիստ կենտրոնացված ունիտար պետության ստեղծումը»[3]:

Սակայն հարկ է նշել, որ հետևողականորեն զրկելով խորհրդային հանրապետություններին, նաև Հայաստանին ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից՝ Խորհրդային Ռուսաստանը ստանձնել էր միջազգային ասպարեզում նրանց շահերը ներկայացնելու և պաշտպանելու պարտավորությունը: Այսպես, 1922 թ. հունվարի սկզբին ստանալով Ջենովայի միջազգային տնտեսական կոնֆերանսին մասնակցելու հրավեր՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը անհրաժեշտ համարեց ստեղծել խորհրդային բոլոր հանրապետությունների (վերջիններս կոնֆերանսին մասնակցելու հրավեր չէին ստացել) միասնական դիվանագիտական ճակատ, դրանով իսկ ամրապնդել Ռուսաստանի դիրքերը կոնֆերանսում: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Համառուսաստանյան Կենտգործկոմի 1922 թ. հունվար ամսի որոշումներով հաստատվեցին խորհրդային միացյալ պատվիրակության կազմը և լիազորությունները: Պատվիրակության 15 անդամների թվում էր ՀՍԽՀ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը[4]:

Խորհրդային հանրապետությունների դիվանագիտական դաշինքն ամրապնդվեց 1922 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում հրավիրված ՌՍԴԽՀ-ի և խորհրդային ութ հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդակցությունում: Որոշվեց առաջիկա կոնֆերանսում խորհրդային հանրապետությունները ներկայացնելու և նրանց շահերը պաշտպանելու իրավունքը հանձնարարել Խորհրդային Ռուսաստանին: Իրավունք վերապահվեց բոլոր հանրապետությունների անունից պայմանագրեր և համաձայնագրեր ստորագրել արտասահմանյան պետությունների հետ ինչպես կոնֆերանսում, այնպես էլ նրանից դուրս[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 187-193:
[2] Տե՛ս Свобода В., Союз добровольный республик свободных? (Из истории создания СССР). Этнографическое обозрение, М., 1992, № 4:
[3] Нежинский Л., У истоков большевистско-унитарной внешней политики (1921-1923). Отечественная история, 1994, № 1, с. 89.
[4] Տե՛ս ДВП СССР, М., 1961, т. V, էջ 66-68:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 110-111:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հետագայում էլ փորձում էր ազգային հանրապետություններին հնարավորինս մասնակից դարձնել խորհրդային արտաքին քաղաքականությանը: Այսպես, ՌՍԴԽՀ դիանագիտության առաջարկով 1922 թ. նոյեմբերի 5-ին Բեռլինում Գերմանիայի կառավարության և խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչների միջև ստորագրվում է համաձայնագիր, որով Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի միջև 1922 թ. ապրիլի 16-ին Ռապպալոյում ստորագրված պայմանագրի դրույթները տարածվում էին խորհրդային հանրապետությունների, նաև Հայաստանի վրա: Հիմք ընդունելով նոյեմբերի 5-ի համաձայնագիրը՝ Գերմանիայի ռեյխսկանցլերը Բեռլինում ՌՍԴԽՀ դեսպան Ն. Կրեստինսկուն նույն օրը պաշտոնապես տեղեկացնում է, որ գերմանական կառավարությունը դե-յուրե ճանաչում է խորհրդային բոլոր հանրապետությունների կառավարությունները և համաձայն է նրանց հետ հաստատել դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ[1]: Նշենք, որ ՀՍԽՀ Կենտգործկոմը Բեռլինի նոյեմբերի 5-ի համաձայնագիրը վավերացրեց 1923 թ. փետրվարի 1-ին[2]:

Խորհրդային Հայաստանի համար կարևոր նշանակություն ուներ նաև այն, որ արտասահմանում գործող Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները իրենց վրա էին վերցրել տարբեր երկրներում սփռված հայության շահերի պաշտպանությունը, մեծ աշխատանք էր տարվում կազմակերպելու սփյուռքահայության հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան: Ռուսաստանի դիվանագիտական աջակցության շնորհիվ 1921 թ. աշնան կեսերին Իրանի հայաշատ Թեհրան և Թավրիզ քաղաքներում սկսեցին գործել ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը և գլխավոր հյուպատոսությունը[3]:

ԽՍՀՄ-ի ստեղծումով խորհրդային ազգային հանրապետությունների, նաև Հայաստանի արտաքին ինքնուրույն կապերը էլ ավելի սահմանափակվեցին և հասան նվազագույնի:

Карен Хачатрян, О вопросе ограничения внешнеполитической деятельности Советской Армении со стороны Советской России (1920-1922 гг.), – После советизации Армении в конце 1920 г. Советская Россия постепенно увеличивала свое политическое влияние как на внутриполитическую, так и на внешнеполитическую деятельность Советской Армении. И если в вопросах внутренней политики республика имела хоть какую-то самостоятельность, то в вопросах внешнеполитической деятельности она окончательно утрачивалась. Партийные и государственные органы Советской России пристально следили за тем, чтобы Советская Армения не вела самостоятельную внешнюю политику, не подписывала международные соглашения и т.д.

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 658-662: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 94, թ. 10-15:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

[3] Մանրամասն տե՛ս Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Ե., 1979, նույնի՝ Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Ե., 1985:

Karen Khachatryan, On the Issue of Restricting Soviet Armenia's Foreign Policy by Soviet Russia (1920-1922), – After the Sovietization of Armenia in late 1920 Soviet Russia gradually increased its political influence both on internal and foreign policy of Soviet Armenia. If the republic enjoyed some level of autonomy in national policy, in case of external affairs it was definitively disassociated. State and party bodies of Soviet Russia were closely following Soviet Armenia in order to prevent it from conducting independent foreign policy, signing international agreements, etc.

Կարեն Խաչատրյան – պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ: